ՍԴ/0157/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 նոյեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ/0157/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 26-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նարեկ Անդրանիկի Կյուրեղյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 91158922 (ՍԴ/0157/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0157/01/23 քրեական վարութն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 17-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 6-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0157/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի նոյեմբերի 14-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Կյուրեղյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա 2022 թվականի օգոստոսի 1-ին որպես պահեստազորում հաշվառված զորակոչվելով ՀՀ ԶՈՒ և նշանակվելով ՀՀ ՊՆ 60369 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ հրաձգային վաշտի 2-րդ հրաձգային դասակի 3-րդ հրաձգային ջոկի հրաձիգի պաշտոնին, կոչումով շարքային, 2022 թվականի օգոստոսի 8-ին հրաժարվել է մեկնել ծառայության վայր և կատարել զինվորական պարտականությունները, որը զուգորդվել է նրա կողմից զինվորական ծառայության առանձին պարտականությունների փաստացի չկատարմամբ»*[1]:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն քրեական վարույթի մեղադրական եզրակացությունից պարզվում է, որ Նարեկ Կյուրեղյանը 2022 թվականի օգոստոսի 1-ին որպես պահեստազորում հաշվառված զորակոչվելով ՀՀ ԶՈՒ և նշանակվելով ՀՀ ՊՆ 60369 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 64-65:

րդ հրաձգային վաշտի 2-րդ հրաձգային դասակի 3-րդ հրաձգային ջոկի հրաձիգի պաշտոնին, կոչումով շարքային, 2022 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ ՊՆ ՌՈ Արարատի բաժնում հրաժարվել է մեկնել ծառայության վայր և կատարել զինվորական պարտականությունները:

Այսինքն՝ Ն.Կյուրեղյանի ենթադրյալ հանցանքի կատարումը ըստ առաջադրված մեղադրանքի՝ ավարտվել է 2022 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ ՊՆ ՌՈ Արարատի բաժնում, որը հանդիսանում է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածք, որպիսի հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակում նշանակում է, որ սույն գործն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (...)»[2]:

8. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 6-ի որոշման համաձայն. *«(...) Քրեական գործում առկա փաստական տվյալների վերլուծությունից հետևում է, որ Նարեկ Անդրանիկի Կյուրեղյանը 2023 թվականի օգոստոսի 6-ին արդեն իսկ զորամասի տարածքում փաստացի դադարեցրել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը, թեև դրա վերաբերյալ բանավոր հայտարարություն չի արել նույն օրը, այլ այդ մասին բանավոր հայտարարել է միայն երկու օր անց՝ 2023 թվականի օգոստոսի 8-ին, ՀՀ ՊՆ ՌՈ Արարատի բաժնում: Այսինքն՝ զինվորական պարտականությունները սույն դեպքում դադարեցվել են զորամասում, հետևաբար հիշյալ հանցագործությունը ավարտվել է հենց զորամասում և սույն դեպքում որևէ նշանակություն չունի հրաժարվելու մասին հայտարարությունը հետագայում որտեղ և քանի անգամ է արվել: Մասնավորապես՝ վարույթի նյութերում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ վերջինս առերևույթ հրաժարվել է իր պարտականությունները կատարելուց դեռևս զորամասի տարածքում գտնվելու ժամանակահատվածում, այն է՝ վկա Նարեկ Սիրեկանյանի որպես վկա հարցաքննության ժամանակ հայտնած հետևյալ տեղեկությունը. «(...) Նշեմ, որ մի քանի որ առաջ հստակ օր չեմ կարող*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 30-33:

հիշել, Ն.Կյուրեղյանը դիմել է գումարտակի հրամանատարին, նշելով, որ ունի լուրջ ընտանեկան խնդիրներ, եթե չեմ սխալվում կապված երեխայի հետ և չի կարող 28 օրվա գրաֆիկով ընդգրկվել մարտական հերթապահության մեջ (...)»: Այդ մասին կարող է վկայել նաև Արմեն Ավետյանի որպես վկա հարցաքննության ժամանակ հայտնած հետևյալ տեղեկությունը. «(...) Նարեկ Կյուրեղյանը, ով առաջին իսկ օրվանից իմանալով, որ հերթապահությունը տևելու է 28 օր հայտնում էր իր բողոքը, ասելով, որ ինքը պատրաստ չի իրականացնել մարտական հերթապահություն, պատճառաբանելով, որ ունի ընտանեկան և առողջական խնդիրներ (...) Վաշտի հրամանատար Գրիգորյանից տեղեկացվել եմ, որ օգոստոսի հրազեն ամրակցելու ժամանակ Նարեկ Կյուրեղյանը հրաժարվել էր ստանալ զենքը (...)» (վ.թ. 144), որպիսի հանգամանքների համակցությունը, համադրելով զորամասը 2022թ. օգոստոսի 6-ին ինքնակամ թողնելու առերևույթ փաստի հետ, հավաստում է, որ մեղադրյալը դեռևս զորամասում արդեն իսկ փաստացի դադարեցրել է զինվորական ծառայության հետ կապված առանձին պարտականությունների կատարումը՝ այդ թվում նաև զորամասն ինքնակամ լքելու եղանակով, որպիսի հանգամանքը հաշվի չի առնվել ընդդատությամբ գործն ուղարկելու որոշում կայացնելիս: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ1/0157/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 42-53:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից»*:

Տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս հանցանքի կատարման վայրը:

ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է նրա կողմից դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ (…)»*:

12.1. ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է նրանում, որ զինծառայողը բացահայտ, գրավոր, բանավոր, կամ այլ կերպով հայտարարում է այն մասին, որ չի ցանկանում զինվորական ծառայություն անցնել կամ հրաժարվում է զինվորական ծառայության հետ կապված առանձին պարտականությունների կատարումից և փաստացի դադարեցնում է դրանց կատարումը: Այսինքն, նշված հանցակազմն առկա է այն ժամանակ, երբ անձը հայտարարում է զինվորական ծառայության հետ կապված իր պարտականությունների կատարումից հրաժարվելու մասին և փաստացի դադարեցնում է դրանց կատարումը: Հետևաբար, նշված արարքի կատարման վայր հանդես է գալիս այն տարածքը, որտեղ անձը հայտարարել և փաստացի դադարեցրել է զինվորական ծառայությունների կատարումը:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

- Ն.Կյուրեղյանը 2022 թվականի օգոստոսի 8-ին բերման է ենթարկվել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Արարատի բաժին, որտեղ հրաժարվել է մեկնել ծառայության վայր՝ պատճառաբանելով, որ ունի ընտանեկան և առողջական խնդիրներ[5]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Ն.Կյուրեղյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքի կատարումն ավարտվել է 2022 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Արարատի բաժնում, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[6]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հիմք ընդունելով սույն վարույթով վկաներ Ն.Սիրեկանյանի և Ա.Ավետյանի ցուցմունքները՝ գտել է, որ մեղադրյալը զինվորական ծառայության հետ կապված առանձին պարտականությունների կատարումը փաստացի դադարեցրել է զորամասում, հետևաբար վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[7]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթի և վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հիմք ընդունելով Ն.Կյուրեղյանին ներկայացված մեղադրանքը, գտնում եմ, որ սույն վարույթով ենթադրյալ հանցանքի կատարման վայր պետք է դիտարկել Ն.Կյուրեղյանի կողմից ծառայության վայր մեկնելուց հրաժարվելու՝ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Արարատի բաժնի տեղակայման վայրը:

15. Ինչ վերաբերում է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչած՝ վկաներ Ն.Սիրեկանյանի և Ա.Ավետյանի ցուցմունքներին, ապա հարկ է արձանագրել, որ վերոնշյալ ապացույցները դեռևս օրենքով սահմանված կարգով հետազոտված և

---

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 43:
[6] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

վերլուծված չեն, հետևաբար *վարույթի տվյալ փուլում* քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ չեն կարող:

16. Ամփոփելով՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ1/0157/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Հետևաբար, սույն վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Նարեկ Անդրանիկի Կյուրեղյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ՍԴ/0157/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ